

— Լաւ՛, լաւ, իմացայ, բաւական է: Աւելորդ եւ երկայն խօսքերու ժամանակ չունիմ, ես պէտք է որ Սաբա թագուհուոյ պէս դործ տեսնեմ, անցիր դու արկղիդ գլուխը նստէ:

— Ես ձեր ամենախոնարհ ծառան չեմ համարձակիր...

— Ես երբ կը հրամայեմ չե՞ս հնազանդիր,— ըսաւ Սեթայ այնպիսի բարկացայտ աչքերով, որ այլեւս դիմադրութիւն չէր վերցներ եւ Յուսիկ իւր ժպիտը, իւր քմծիծաղը, իւր քաղցր ճարտարախօսութիւնը ի բաց թողլով՝ անցաւ նստաւ իւր տեղը, իւր ոչխարի հինաւուրց մորթին վրայ, բարակ շրթունքը բերնին մէջ ամփոփելով ի նշան մեծ համբերութեան՝ նման կատարեալ այն փոքրիկ տղունք որ սրտահառաչ ակամայ դպրոց կ'երթայ եւ գիտէ թէ թաթն ու չոր հացն իրեն կը սպասեն:

Յերա վաճառականք եւ ուրիշ ամիսներով, տարիով ապաստող պարտատերք վայրկեանին վճարուեցան առանց քննութեան: Խեղճ Յուսիկ, որ իւրաքանչիւր պահանջի դիտողութիւն ընելու հազիւ թէ բերանը կը բանար, «բայց Տիկին...» ըսելու նաեւ ժամանակ չի տալով՝ իշխանուհին՝ «Դիտողութեանց ժամանակ չի կայ, վճարէ»,— կ'ըսէր խիստ եւ կամաց ձայնիւ: Երբ պահանջ եւ պահանջող չի մնաց, ելաւ Սեթայ անյայտ ակնարկ մը հազիւ ձգելով Յուսիկի վրայ, որուն անմխիթար կերպարանքը, նուաղեալ աչքերը, տժգոյն երեսը կը յայտնէին սրտին վիճակը:

Խեղճ գանձապետը տխուր նայեցաւ մէկ մը իւր դատարկացեալ արկղին վրայ, մէկ մը այդ դռան վրայ, ուստից գնացեր անհետացեր էր Տիկինը, եւ ըսաւ հառաչանոք.

— Ապրի՛ս, շա՛տ ապրիս, Ռշտունեաց Տիկին, ի՛նչ մեծ քաջութիւն էր, որ գործեցիր: Փուճ տեղ չեն ըսեր պապերը՝ «Մազն երկան՝ խելքն կարճ»: Եւ սա ամենե՛ն խելօքն է: Ափսո՛ս, ափսո՛ս: